

ծրագրերն ու սպասումները: Իսահակյանը ամենայն ահագնությամբ զգաց մեծ տերությունների քաղաքական նենգությունն ու դիվանագիտական անբարոյականությունը: Ի չիք դարձավ 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը: Թուրքիան ներգրավվեց պատերազմի մեջ զրպես Գերմանիայի դաշնակից եւ, օգտվելով ռազմական իրավիճակից, անցավ իր երազանքի իրագործմանը՝ հայ ժողովրդի արեւմտյան հատվածի բնաջնջմանը: Գերմանիան քաջալերում էր Թուրքիայի հայաջինջ ծրագրերը՝ համարելով հայերին Ռուսաստանի «գրական դաշնակից» եւ Մերձավոր Արեւելքում երկուսի առաջադիմությանը խոչընդոտող ուժ: Նրանց պետք էր Արեւմտյան Հայաստանն առանց հայերի: Եվ իրագործվեց այն:

Ահա ինչ էր գրում Ավ. Իսահակյանը Գարեգին Լեւոնյանին 1916 թ. ապրիլի 2-ին: «Նզովված, հազար անգամ նզովված Գերմանիան դարերի քաղաքակրթությունը կործանեց, օ՛հ, ի՞նչ սարսափելի օրեր եմ անցել եւ անցում եմ. այս ի՞նչ արյունոտ խելագարություն է. - սպանություն, սպանություն, արյուն, արյուն, արյուն. Հայաստան այլեւս չկա, բառացի ասած՝ Թուրքիայի հայերը ոչնչացան, ե՛րբ պիտի մույն օրին ընկնի զազան Գերմանիան, որ մարդկությունը ազատվի մարդակեր Վիլհելմից, Հոենցոլերնի տան ձեռքից, սրիկա, բորենի կրոնաքինից: ... ԱՄբողջ հոգով ու սրտով ռուս քաջ զինվորների հետ եմ հայոց լեռներում, նրանք մեր վրեժը լուծում են. դարերի ընթացքում ռուսն է թուրքի գլուխը ջարդել եւ ազգեր ազատել - Հունաստան, Ռումինիա, Մերքիա, այսօր հերթը հայերիս հասավ¹⁷»:

Հայոց գեղասպանությունը բանաստեղծին պարզ դարձրեց մի ճշմարտություն. հայ ժողովրդի ապրող հատվածի փրկությունը Ռուսաստանի հետ միավորումն է, միայն Ռուսաստանի ներկայությունը կարող է կապեցնել թուրք ենիզերիների եւ նրանց գերմանացի հովանավորողների հայաջինջ ծրագրի վերջնական իրագործումը: Անհիմն չէր բանաստեղծի տագմապը Առաջին հանրապետության ապագայի վերաբերյալ:

1918 թ. դեկտեմբերի 13-ին Չոպանյանին հղած մամակում Իսահակյանը գրում է. «Շա՛տ եմ վախենում, եւ հիմք ունիմ վախենալու, թե մի գուցե Հայաստանի մոտակա ազատությունը ծագի մեր ժողովրդի համատարած գերեզմանոցի վրա¹⁸»:

Ավ. Իսահակյանը առավել հիմնավոր շարադրել է իր համոզմունքը 1921 թ. հուլիսի 1-ին Հովհ. Թումանյանին գրած մամակում, ուր մասնավորապես ասված է. «Ես ինքս ազգային բացարձակ անկախության ոչ կուսակից էի, ոչ հավատացող, եւ ոչ էլ համոզված. մենք մեր ուժերով չէինք կարող անկախ լինել եւ պահել անկախությունը. Եվրոպան ոչ միայն չի օգնի մեզ, այլեւ թշնամի է եւ հրճվում է հայկական բնաջնջումով: սրան համոզված եմ փաստերի վրա, ինձ համար Անգլիան ու Ֆրանսիան այնքան դաժան գտնվեցան, ինչքան Գերմանիան. քրիստոնեություն, քաղաքակրթություն, մարդասիրություն, դատարկ հնչյուններ են եվրոպացու աչքում. պետք է երես դարձնել այդ ավազակներից եւ մոտենալ Ռուսաստանին... ըստ իս, Հայաստանը եւ հայ ժողովուրդը կարող է միայն ապրել Ռուսաստանի հետ, կամ բնավ չի կարող ապրել: Մնացածը հիմարությունից վեր մի բան էր¹⁹»:

Հովհ. Թումանյանի նման Ավ. Իսահակյանն էլ ողջունեց Ռուսաստանի Փետրվարյան հեղափոխությունը՝ հույսեր կապելով ազատության բուրժուական հայտնի կարգախոսների հետ: 1917 թ. մարտի 28-ին Գարեգին Լեւոնյանին Իսահակյանը գրում է. «Անսահման, անսահման ուրախ եմ ռուսական հեղափոխության հաղթանակով. նոր դարագլուխ, եւ վերջապես փրկվեց հայությունը: Այժմ ընդմիջտ ապահով է հայ ժողովրդի ապագան, մի 30-40 տարուց հետո, մենք կունենանք ամուր, ուժեղ, հարուստ, մեծաքանակ հայություն. Ռուսիան պիտի հավաքող լինի հայկական հողերի եւ հայր ինքը ազատագրողը եւ յուրացնողը այդ նվիրական հողերի. մեր ներկա սերնդի եւ ապագա բոլոր սերունդների միասին պիտի լինի Հայաստանը դարձնել Հայաստան²⁰»:

Ինչպես տեսնում ենք, 20-րդ դարակերպի հայ գրականության մեծերը համապարփակ էին ընկալում ազատագրական պայքարի համազգային խնդիրները եւ տերությունների մրցակցային հակամարտությունների պայմաններում ժողովրդի հավաքական ուժի վճռորոշ դերը:

Որոնք կարողացան ազատագրվել արեւմտյան տերությունների հետ հույսեր կապելու կորստաբեր մոլորությունից եւ որդեգրել իրասնական կողմնորոշում:

Հայկական հարցի գլխական պատմագրության ստեղծման համար նրանց տեսակետները կողմնորոշող եւ անանց արժեքներ են:

Н. Б. САРУХАНЫЯ — Великие армянские писатели начала XX века об армянском вопросе. Вопросы исторических судеб армянского народа, поиски путей его возрождения занимают важное место в творчестве и общественной деятельности великих армянских писателей начала XX века. В статье показано, что наилучшим исходом решения Армянского вопроса Гр. Зограб, Ов. Туманян, Ав. Исаакян и В. Терьян считали освобождение западноармянских областей при помощи русских войск, воссоединение двух частей отечества и его свободное развитие в тесном союзе с Россией.

¹⁷ Ավ. Իսահակյան, Երկեր, հտ. չորրորդ, Երևան, 1959, էջ 151:

¹⁸ Նույն տեղում, էջ 173:

¹⁹ Ավ. Իսահակյան, Երկեր, Երևան, 1987, էջ 813-814:

²⁰ Նույն տեղում, էջ 180-181:

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ԱՂՕԹԱՐԱՆԸ»

Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ամենաբարձր բանը աստվածանայն է՝ բարձրանալ, խորանալ, ներշնչվել խոհերով, զգացմունքներով եւ արեղծագործել: Հ. Թումանյան

«Աղօթարանը» 20-րդ դարի կեսերի մարդու աղոթքն է, եկեղեցունքը, ուրախության ճիչը, որ կա, ապրում է Աստծո արարած աշխարհում, վայելում բնությունն իր ամենաբազմազան հրաշքներով: «Կը հաւատամ, որ կաս Տէր»¹, հայտարարում է Համաստեղը՝ այդ հավատի հաստատումը փնտրելով ծաղիկներից մինչեւ աստղեր, մահկանացուի կյանքի առանձին պահերից մինչեւ հավիտենականություն:

Համաստեղը հայ մարդուն պարզեցեց 22 աղոթքներ, որոնք միահյուսվում ու լրացնում են մարդու սրտի չափ փոքր ու մարդու զգացմունքների պես անծիր տիեզերքի գովքը: Ամեն ինչում ու ամենուր Տիրոջ գոյությունն ու շունչը տեսնող մարդը Մարդ-Աստված միատերիայի կրողն է: Աստծո հետ միավորված մարդը, ըստ էության, իր մտահայեցողական ընթացքի մեջ ծավալվում է տիեզերքով մեկ: Նա երկրի վրա վերագտնում է երկնքում փնտրած երազները, որոնք ապրում են սիրո, կնոջ ու բնության տեսքով:

Մարդը երբեք մենակ չէ. Տիրոջն ուրանալու պահին էլ Աստված նրան չի լքում: Բարության ու աստվածային ներողամտության ոգին սովորեցնում է ներել անգամ թշնամիներին: Մահկանացուների կյանքը հավիտենականության մասն է, ու մարդը կարող է զգալ հավերժության բերկրանքը լոկ այն պահին, երբ Տիրոջ պես բարի է, ուրախություն է պարզեցնում մերձավորին, հոգում կարիքավորի հոգեւոր: Փոխհատուցումն աստվածային ժպիտի կրկնությունն է մարդկանց երջանիկ դեմքերին: Այլ խոսքով՝ երբ մարդն ապրում է աստվածային բարության օրենքներով, իր «օրհասի վերջին շունչին մէջ» էլ մենակ չէ եւ կարող է զգալ Տիրոջ հավերժական շունչը: Ավելին՝ նա յուրահատուկ քաջությամբ է դիմավորում մահը, քանզի «Դու ես կուգաս ինձի հետ գերեզմանին մէջ փակուելու» (13):

Համաստեղը կյանքն ու մահը ընկալում է ամբողջության մեջ ու չի վախենում վախճանից: Գրողը մարդու առաջ բացում է տիեզերքի անսահմանությունն ու նրա հոգին, սիրուն ու միտքը ուղղում դեպի երկինք, որտեղ չկա մահ ու թույն, վիշտ ու ցավ: Նրա կարծիքով՝ կյանքի հավերժական հուրվայթի մեջ չկա վերջ ու վախճանի տխրություն: Եթե տիեզերքում գոյություն ունեցող ամեն ինչ Տիրոջից է եւ իմաստավորվում է նրա գոյությամբ, ուրեմն զգայարանների միջոցով ստացված ամեն մի հույզ, գիտելիք ու դրանցից ծնված միտք՝ անկախ դրանց բազմազանումից, տարբերություններից, Աստծո գոյության փաստարկ է ու դրանով իսկ գոյության իրավունք ունեցող: Թո՛ղ որ հույզերս շատ են բազմազան, գիտելիքները հաճախ կտրում են մարդուն Աստծուց, միտքը թափում է մույնիսկ տիեզերքի գաղտնիքների դռները, կարեւորը նախ եւ առաջ դրանց ծագումն է, արմատը, որից ծնվում եւ որին հանգում են դրանք: Սա է Համաստեղի աշխարհընկալման, հավատի հիմքը:

Անմոռանալի է մուրացկանի խորհրդանշական պատմությունը (Աղօթք Դ-), որը ներկայացնում է համատարած խաղաղության, աշխարհի, բնության եւ մարդու ներդաշնակ գոյության պատկերը: Դարեր շարունակ Աստվածաշունչը սովորեցնում է օգնել խեղճներին ու աղքատներին, բայց, ինչպես ապացուցում է կյանքը, գրեթե ապարդյուն... Իր հարգարժան հյուրերին հնարավոր տեսություններից հեռու պահելու համար հեղինակը դուռը փակեց օգնություն խնդրող մուրացկանի առաջ: «Երբ փակեցի, ան չդժգոհեցաւ: Աչքերուն, դէմքին վրայ ներդամիտ ժպիտ մը երեւեցաւ, ու ան հեռացաւ» (16), - գրում է Համաստեղը: Մուրացկանի «ծանր դէմքը», «ծերացած ձեռքերը, որ կարծես մաշած էին» Ավետարանի էջերը թերթելուց, դարձան խղճի խայթ ու ստիպեցին փնտրել, գտնել նրան: Բայց արդեն ուշ էր. «Իրեշտակները կարծես երկինք տարեր էին զայն» (16):

Սա այն իրականությունն է, որ հեթաթի պես անհրաժեշտ է, ու այն հեթաթի, որ տեսանելիության չափ իրական է ու հասկանալի: Մի բառով՝ մի՛ֆ, որ ծնվում է կյանքում, կյանքից ու վերադառնալով կյանք՝ իմաստավորում այն: Ինչքան անհիմն է հեթաթին առանց կյանքի, մույնքան էլ անբովանդակ է կյանքն առանց հեթաթի: Համոզված կարելի է ասել՝ մուրացկանի տեսքով Տերն էր այցի եկել ու մերժվել: Ուրեմն՝ Համաստեղն ականա մերժել է Աստծուն: Մարդ արարածը ոչ միայն կանգնած է Աստծո առաջ, այլեւ հավիտյան մեղավոր է ու հանցապարտ:

Ամեն զիշեր կրկնվում է դուռն քակոցը, որն իրականում չկա, հնչում է Համաստեղի ներաշխարհում, վերածվում խղճի խայթի, որպես այդպիսին՝ մերժում առօրյա ուրախությունները. «Լա՛յ ինձ, որ կամեղածեցայ Զո գոյութեանդ, Տէր, ու ինկալ տղմուտ ճամբաներուն մէջ, եւ մարմինս հողի՞մ հակած՝ ծանր խեցի մը դարձաւ» (19):

Առօրյա հոգեւոր, ամենօրյա տազմապնեղի մեջ մարդը երբեմն մոռանում է երկնքի հետ իրեն կապող մտերմությունը ու ստիպված է ռդբալ, որ «մարդոց մոլուցքին մէջ» ընկնելով՝ դարձել է «դաճաղակիւրն գեղեցիկ բաներուն եւ պատերազմի դաշտը բշուեցալ՝ սպաննելու կատաղութիւնով ու դիպիւն քրքիջով» (20): Մարդը խախտել է երազների դաշնությունը՝ երկաթի աղմուկներով, շոգեկառքերով երկաթեղեն արշաւանքներով եւ սա-

¹ «Աղօթարան», Պէյրութ, 1957, էջ 5: Այս զրբից հաջորդ մեքերումները նշվում են փակագծերում:

լառնակներու մոլեզին կոխներով» (20): Փաստորեն խզվում է մարդուն Արարչի հետ կապող մտերմությունը, մարդը հայտնվում է նյութական աշխարհում՝ առանց հոգու եւ հոգեւորի, առանց երազի:

Մարդն իրենից դուրս է փնտրում իսկական խաղաղություն, երանություն ու երջանկություն: Փնտրում է ու չի գտնում, չի կարող գտնել. առանց Աստված՝ մարդը ենթակա է ատելության ու կոթի հողմերին, իսկ Սերը պարզապես չի ապրում այդ պայմաններում: Չկա Սեր, չկա մահւ Աստված, ուրեմն՝ չկա երազ ու հավատ: Այլ խոսքով՝ կա գոյություն, բայց չկա Կյանք: Երազները չեն ապրում հաշվի ու հաշվենկապության պայմաններում եւ «ընդմիջտ իրենց բոյները լքող աղանձներում պէս» հեռանում են: Գոյանում է երկու հակադիր բնույթ՝ մեկը՝ ստեղծագործելիս մարդն աստվածային ոլորտում է, մյուս եզրը՝ մարդու դատադրությունները ստիպում են իմաստավորել իր նյութական գոյությունը:

Երբ չկա մարդու ներքին երկվությունը՝ հոգու ու մարմնի անլուծելի, հավերժական հակամարտությունը, մարդը երջանիկ է: Հավատավոր մարդը մահվան երկյուղը հաղթահարում է անվերջավորի մեջ իր վերջավոր գոյությունը հաստատելու միջոցով: Կա Աստված, ու չքանում են չարն ու չարիքը, մահը, մեղքն ու հանցանքը. տիեզերքը շնչում է աստվածային սիրով: Մարդն ինքը հակասությունների կծիկ է ու ապրում է ոչ պակաս հակասական աշխարհում: Նա կարող է դառնալ երկրի տեր ու տիրական, եթե միշտ պահի Սիրտ, Հույսի, Հավատի աստվածատուր շնորհը, մի բառով՝ նա կդառնա Մարդ, որն ունի աստվածային գերագույն պարզեցները՝ անմահություն, ազատություն եւ Աստծո մոմսություն: Այլ խոսքով՝ մարդը կդառնա Աստված, եթե երկրային վայելքների բավիղներում չկորցնի Արարչին նմանվելու նպատակը:

Համաստեղի Աստվածը կոնկրետ չէ, որովհետեւ իրական աշխարհի ու մարդու ներաշխարհի զուգորդումն է, իսկ դրանք շատ բազմազան են, գունագեղ, հաճախ՝ իրարամերձ, որպես միասնականության՝ իրար լրացնող, իրարով պայմանավորված մասեր: Ու եթե աստվածաբանությունը երբեմն բնորոշում են որպես մարդաբանություն, ուրեմն՝ Համաստեղի՝ Աստծուն ուղղված աղոթքները եւ մարդուն ներկայացնելու փորձերը կարելի է տեղափոխել ու դիտարկել որպես մարդու աստվածային էությանն ուղղված հուզառատ խոսք եւ Աստծո մարդկային էությունը ներկայացնելու փորձ: Այստեղից էլ ստացվում է այն տպավորությունը, թե «Աղօթաբանում» «Չկա հեռավորություն, չկա բարձրություն իր եւ Աստծո միջեւ»²:

Այնինչ Համաստեղն էլ Նարեկացու պես կատարյալ ներդաշնակությունը փնտրում ու գտնում է միայն աստվածության մեջ: Նրա համար էլ «գերագույն իմացությունը Աստծու ճանաչողություն է, բարձրագույն բարոյականությունը՝ աստուածամանությունը, բարձրագույն նպատակը՝ հոգու փրկությունը»³: Իր համճարեղ նախորդի պես Համաստեղն էլ հայացքն ուղղում է «մարդուն» Աստծու համար, Աստծուն՝ մարդու համար»⁴:

Համաստեղը մարդու մարմինը չի ընկալում որպես մեղքի, գայթակղությունների պատճառ: Նա լավ է հիշում Աստվածաշնչի խոսքը, բայց հեռու է աշխարհը, բնությունն ու մարդուն, մարմնականն ու նրանից եկող, նրանով ընկալվող հաճույքը գայթակղություն համարելու մտքից: Դիշտ է, գայթակղությունն ամենուր է, քանզի անհամար են երկրային բարիքները, որոնց խայծով Չարը որսում է առաքինության օրինակներին չհետևող, սպասվող պատժի մասին մտաջաճ մարդուն, ինչպես ստում է Դանթեի ճշանավոր հերոսը:

Համաստեղի համար կյանքն առաջին հերթին ուրախության, վայելքի ակունք է: Ու եթե նա ընդունում է Ինտրայի բանաձևումը՝ «Ամեն սկիզբ երազով այլակերպված վախճան մ'է», առաջին պլանում դնում է երազանքը ու չի պատկերացնում երազից անջատ կյանք ու գոյություն: Մարդու ԵՍ-ի մեջ նա տեսնում է Աստծո արտահայտությունը «Աղօթաբանի» հեղինակն անհատապաշտ չէ, բայց հանրությունից դուրս՝ էլ այնքանով, որքանով հնարավոր է խոսել մարդկության անունից, երբ խոսքը մարդու ներաշխարհի մասին է: Նա չի պարտադրում իր ճանաչած կանոններն ու սկզբունքները, պարզապես ներկայացնում է սեփական կենսափորձով ձեռք բերածը, որ երբեմն հակասական է, իրարամերձ, բայց միշտ անկեղծ ու հուզիկ:

Հավատից անբաժան է կասկածը, որը երբեմն պարզապես հավատի գոյության ձեւերից է: Աստծո՝ հողեղեն մարդու համար սահմանված աստվածային վարքի չափանիշները գրեթե անիրագործելի են: Մաղմուսեզու Դավթի օրինակով Համաստեղն էլ է խնդրում. «Եվ դատաստանի մի՛ մտիր քո ծառայի հետ, որովհետեւ ոչ մեկ կենդանի չի արդարանալ քո առաջին»⁵: Ինչքան բնական է մարդ արարածի գրեթե բնածին հավատն առ Արարիչ, նույնքան էլ հիմնավորված է ՄԱՐՄԵՂԵՆ արարածի երկմտանքը, որ ծնվելուն պես հերքվում է, ավելի ճիշտ՝ ինքնաժխտվում: Ու կա հույսը, որ Աստված մարդուն կփրկի անզամ նրա ծածուկ սխալներից, էլ ուր մնաց թե գիտակցված մեղքերից: Աներկբա է Համաստեղի հավատը, բայց մարդկային ու հասկանալի է ամեն ինչ իր զգայարաններով, սրտի ճանաչողությամբ ընկալելու ձգտումը:

Հավիտենականի խնդրությամբ ապրելու միակ միջոցը ինքնաճանաչումն է, ու, եթե տիեզերքի գաղտնիքներից առաջ մարդը կարողանա հասկանալ իր «հոգիին բարբառը», արժանի կլինի Աստծո հետ խոսելու ու նրան տեսնելու պատվին: Մարդուն ինքնաճանաչողության հասցնող ճանապարհն անցնում է իր նմանին՝ մեկ ուրիշ մարդու ճանաչելու դժվարին արահետներով: Անհատի սերն առ Աստված դրսևորվում է առաջին հերթին որպես սեր Մարդու նկատմամբ, այլապես աշխարհը կդատարկվի, կամայաճա: Գերխնդիր, որ անլուծելի է համատիեզերական ենթատեքստից դուրս. անսահման տիեզերքի գիտակցող ու ինքնագիտակցող միակ էակն է մարդը:

Ուրեմն՝ անվերջանալի է մարդու ինքնաճանաչողության, այլ խոսքով՝ կատարյալի ձգտումը, որ ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստծուն իր ներսում բացահայտելու եղանակ: Ինքնաճանաչողությունն անխուսափելիորեն տանում է դեպի երկինք, ավելի ճիշտ՝ օգնում երկրի վրա ապրել Տիրոջ ու Արարողի, մի բառով՝ Մարդու լիարժեք կյանքով:

«Ամեն մեկ ստեղծագործությունն նուաճում մըն է լուրթեան ու երկնքին» (41), ու հոգիների «ամեզր ովկիան» լուրթյան ավիին ճայերի նման ճախրող մարդն արարման՝ ստեղծագործելու պահին ձգտում է մտնենալ Աստծուն, դրանով հաստատում գոյության իր իրավունքը: Փաստորեն՝ մարդու հոգուն ապրում է տիեզերագույն մեծ լուրթյուն, որից մարդն առանձին ակնբարքներ է իմաստավորում: Աստվածային լուրթյունը հասկանալու, մեկնելու միակ միջոցը մարդու հոգին է. «բոլոր մարդոց հոգիներում մեջ կայ այն գիծը, ուր երկինքը կը միանայ» (38): Անկատար է մարդը, քանզի ի գորտ չէ լսելու, ըմբռնելու իր «հոգեկան լուրթեան, հաղորդակցելու համար Զեզի հետ, Տէր» (38):

Արարման կոչված ամեն մի մարդ, երբ գգում է «անհանգիստ խրտանքը ստեղծագործութեան», փորձում է բարձրանալ, հասնել Տիրոջը: Մարդու ԵՐԿՐԱՅԻՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ծնվում է երկնային շնորհների չիմացությունից, գայթակղություններից ծագող հանցանքներից, որոնց անպայման հաջորդում է զոջման գիտակցումը. «Լա՛յ ինձ, որ յաճախ անցար իմ բովեն, ու ես չճանչայ Զեզ, Տէր» (22): Արարման հրաշքն ապացուցում է, որ մարդն իր մեջ կրում է տիեզերական բարությունը: Չար մարդկանց նա անվանում է հիվանդներ, որոնց «մեջ պակաս է կեանքին գեղեցկությունը ըմբռնելու իմաստությունը, մանաւանդ իմաստությունը զգայարաններում» (25): Համաստեղը, ըստ էության, հակադրվում է բոլոր այն իմաստասիրական ուսմունքներին, որոնք հենված են ու սկիզբ են առնում դեմոկրիտ-էպիկուրյան հանրահայտ պատկերացումից, թե զգայարանները, որոնք օժտված չեն մտածողությամբ, երբեք չեն խաբում մարդուն:

Համաստեղի կրոնագագաղության կենտրոնական դեմքը մարդն է, որն իր զգայարաններով շոշափում, զգում, ընկալում է տիեզերքն ու Աստծուն, երկրպագում նրան՝ որպես հավերժական բարություն, որի մասն է ինքը: Մարդու աստվածային էությունն օգնում է շունչ, կենդանություն փնտրել ու գտնել ամենուր եւ ամեն ինչում՝ որպես տիեզերքի արարման, աստվածային ծագման ապացույց: Համաստեղը չի խոսում մեղքի մասին, քանզի նրա համար առաջնայինը վայելքն է՝ որպես աստվածային շնորհ, որ արված է մարդուն: Մարդը դառնում է աշխարհի, բնության ու մարդու, որպես դրանց բաղկացուցիչ մաս, գոյությունը հաստատողը: Զգայարանները ոչ միայն աշխարհընկալման ու ինքնաճանաչման, այլեւ Աստծո փառաբանության, մարդուն Տիրոջն անխաղաղ կապող, նրան իր սկզբին վերադարձնող օղակներ են: Դրանք մարդուն զատում են անկենդան բնությունից՝ միավորելով նրան՝ որպես գոյության փաստն արձանագրելու, զգալու եզակի ունակություն: Զգայարաններ ասելով՝ Համաստեղը նկատի ունի նաեւ դրանցով աշխարհն ընկալելու ունակությունը: Հոգեւորի ու մարմնականի միասնության օրենքով անբաժան են Աստված ու մարդ, երկինք ու երկիր, զգացմունք ու զգայարան...

Գոյության ամենկենդի գաղտնիքներից է Սերը, որը «Աստծոյ շունչն է» մարդու մեջ: Սերն օգնում է մարդուն վեր բարձրանալ իր անձից, դառնալ անանձնական, ու միայն այդ ժամանակ են բոլոր իրերը գեղեցիկ, մարդիկ՝ բարի, կանայք՝ օրհնաբեր մոր պես: Սիրուց, որ արարման, ստեղծագործության հրաշքի գաղտնիքն է, սկսվում է հավերժությունը: Միայն սիրով կարելի է հասկանալ ուրիշի վիշտն ու կարիքը, միայն սիրո միջոցով կարելի է կարեկցել, օգնել, ամոքել, սրբել արցունքները: Ինչքան կատարյալ է մայր դարձած կինը, որի գովերգումը բանաստեղծումի՝ հնուց ի վեր հղովվող թեմաներից է, նույնքան կատարյալ է սիրող մարդը, ու ողբալի է աստվածային այդ շնորհից զրկվածի գոյավիճակը: Գորդը խոնարհվում է կնոջ իրական ու անիրական, անծանոթ ու կախարդական ոգու՝ գաղտնիքի առաջ. «Կինն է որ կը յաղթէ մահուան ամեն անգամ որ բազուկներում մեջ երախայ մը կը գրկէ: Այն ինչքա՛ն իմաստութիւն, Տէր, որ բաշխեցիր մեր մարմնին» (34):

Համաստեղի կրոնագագաղությունն առաջին հայացքից շփման եզրեր ունի պանթեիզմի հետ, բայց նա չի նույնացնում Աստված ու բնություն, այլ աստվածային էության առանձին տարրեր է տեսնում, ճանաչում կենդանի ու անկենդան բնության մեջ՝ որպես Աստծո գոյության հաստատում: Պակաս կարեւոր նշանակություն չունի մի այլ հանգամանք եւս՝ Համաստեղի՝ բնության գովքի, բնապատկերների ու բնանկարի գոյների անբաժան մասն է հայրենի բնաշխարհի Կարոտը: Այս առումով «Աղօթաբանի» ինքնատիպ, ոչ ուղղակի շարունակությունն է «Հայաստանի լեռներու սրնգահարը» երաժշտական դրաման: «Աղօթաբանի» բնությունն իրական է՝ մարդկային բիրտ օրենքներից վեր գործող աստվածային կամքով վերագտնված (թո՛ղ որ առաջմ միայն երագում), Կարոտով շաղախված: Մարդու համար էականը Աստծո արարած աշխարհն ու բնությունն են, իսկ Համաստեղ մարդու հոգու խորքում ծխում է անթելված Կարոտը:

Համաստեղի աղոթքները կարելի է հասկանալ նաեւ որպես մարդու երկու էությունների հետաքրքիր երկխոսություն, որ բացում է ընթերցողի սրտի ու մտքի գաղտնարանները՝ նրան մղելով անկեղծ ու ջերմ գրույցի ինքն իր, նրա էության անբախտելի մասի՝ Աստծու հետ: Դիշտ է, «Աղօթաբանի» հեղինակը չունի իմաստասիրական, գեղագիտական հայացքների կոտ համակարգ, որպես մտածող երբեմն պարզունակ է, հակասական, բայց իբրեւ մարդու ներաշխարհի գաղտնիքները ներկայացնող բանաստեղծ՝ անկեղծ է ու անկրկնելի: Ապացույց՝ զրքի բազմաթիվ հատվածներ, հատկապես՝ Ի՝ գլուխը: Համաստեղի աղոթագրքի այս հատվածը ձոն է ծովի պես անեզր ու երկնքի պատկերն իր խորքում պահող մարդկային հոգուն:

Ի վերջո մարդու գրույցն Աստծու հետ ավարտվում է կատարյալ ներդաշնակությամբ. մարդու, բնության, կնոջ գովքը ծուլվում է Աստծուն ուղղված անկեղծ ու սրտաբուխ աղոթքներին, որոնք պոկվում են գրողի ալեկոծ հոգուց ու թռչում դեպի երկինք: Տիեզերական սիրո համայնապատկերի վրա բարձրանում է «այնքան գեղեցիկ ու

² «Էջմիածին», 1953, թիվ 3, էջ 61:

³ Ա. Ղուլիմյան, Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական արտեստը, Ամբիկաս, 1995, էջ 83:

⁴ Նույն տեղում:

⁵ Աստվածաշունչ, Մաղմուսներ, ԴԽԳ: 2:

աստուածային» կյանքի համար աղոթող մարդը, որի «պարտութիւնը երազներուն» սքանչելի բնապատկերին «ձեռն եւ խորհուրդ» հավելող գերեզմանոցի է նման:

Համաստեղի գրչի տակ կենդանանում են պատկերները, բառը բռնյր ու համ ունի, շարժումը՝ սկիզբ ու ընթացք, կյանքն ու մահը փոխանաստալորված ու անբաժանելի՝ որպէս սկիզբ ու վերջ հարատեւ արարման, որի առանձին մի շրջանն է մարդու գոյությունը երկրի վրա: «Աղօթարանում» կան բառերի, պատկերների անհարկի կրկնություններ, ոչ հստակ, իրարամերժ ձեռնկերություններ, բայց բանաստեղծական շնչով հագեցած տողերից վեր է հանում ԱՍՏՎԱԾԱՍՏԱՐԴՈՒ պատկերը՝ որպէս մարդու երկրային գոյության նպատակ ու վերջնակետ:

«Աղօթարան»ը իմ կենսի որոշ շրջանի մը տուրքն է⁶», - գրել է Համաստեղը Գրիգոր Շահինյանին 1958-ի մարտի 15-ին: Զննադատ Եղուարդ Պոյաճյանը «Հայր մերի մը» չափ պարզ այս գրքույկի «կէս-քրիստոնեայ եւ կէս հեթանոս» աղոթքներում լսում է նաեւ «աշմանացող կենսի մը» «տակի, բայց տխուր շշուկը»⁷:

Համաստեղի աղոթքը մարդու հոգեւոր ինքնակատարելագործման փորձ է՝ հավերժական ու ամեն մեկի կյանքով կրկնվող:

М.М. ХАЧАТРЯН - "Ахотаран" Амастеха. "Ахотаран" Амастеха- крик радости человека: он живет в мире, созданном Богом, пользуясь всеми благами природы. Писатель подарил человеку 22 молитвы, воспевающие Любовь, Женщину, Природу. Его молитвы - попытка самоусовершенствования Человека. Эта попытка вечно повторяется с жизнью каждого человека, но лишь избранные могут об этом писать в поэтической форме.

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ 1870-1874ԹԹ

Ա. Մ. ԳԼՉՅԱՆ

- Կեցիք, գրիչ, ինձմե առաջ մի փազեր:
- Մտքաւ:
- Այ մի մտնար:

Հ. Պարոնյան

Հայացք գցելով կյանքի պատասխանատու փուլ թեւակոխած Պարոնյանի ստեղծագործության վրա՝ արձանագրում ենք, որ այն բազմաժանր է՝ ակնարկ, ֆելիետոն, պատմվածք, նորավեպ, թատերգ, նաեւ՝ թատերական հոդված... Ժանրային այս ձեւերին դիմելը՝ պայմանավորված էր գրողի ինքնահաստատման փուլով, գեղագիտական որոնումների բնույթով, հայ գրականության զարգացման մակարդակով եւ հասունության աստիճանով:

«Ոչ միայն ստեղծելու, գեղարվեստական գործ գրելու, այլեւ տակ փաստը նկատելու համար ես պետք է իր տեսակի մեջ արվեստագետ լինեմ»¹, - բացատրում է Ֆ.Դոստոևսկին: Պարոնյանը, գրական ուղու հենց սկզբին նկատելով ժամանակի հրատապ փաստերը, առաջին փորձությունը անցավ: Բայց, իսկն ասած, դա իր շնորհքը չէր: Ուղու հարցում նա հետետողը եղավ մեծ մակարդների, մասնավորապէս Ս.Ռսկանյանի, Հ.Մըվաճյանի, Մ.Նալբանդյանի, որոնք արդեն հասարակական մտքի ուշադրությունը բեւեռել էին այդ հարցերի վրա: Իրքեւ ինքնատիպ տաղանդ՝ Պարոնյանի արժանիքը դրսևորվեց, երբ նա ստեղծագործեց արձակ ժանրային ձեւերով, մշակեց փաստի գեղագիտությունը:

Ուսումնասիրելով այս շրջանի ստեղծագործությունները² նկատում ենք դրանց որակական ինքնատիպությունը: Նպատակը ոչ թե քաղաքային կյանքի նորությունների նկարագրական տեղեկատվություն սալն է, զվարճալի կամ հետաքրքրաշարժ պատկերներ ստեղծելը, այլ կեցության շարժիչները շոշափող գրողի ինքնատիպ հայացք մշակելը: Իրքեւ նոր սկզբունքի արվեստագետ՝ նա քայլ առ քայլ ընդարձակում է իրականության յուրացման սահմանները, գեղարվեստական խոսքի հնչեղությունը: Ուղին սկսելով ակնարկային ժանրերով՝ հետո ընդգրկում է պատմվածքը, նորավեպը, թատերգը...

Այս ստեղծագործությունների մեջ գրողը մարմնավորում է առաջին կերպարները, բախումները, հիմնահարցեր իր բացահայտած... Գեղարվեստական պատկերման նյութ են դառնում իրականության մեջ մարդու տեղի, շրջապատի հետ կապի հարցերը:

Ակնհայտ է, որ ժամանակի կերպարները դեռնու այնքանով են պարզորոշվում, որքան գրողը կարողանում է իմաստավորել դրությունները, հարաբերությունները, դիպվածները: Երբեմն, ստեղծագործական տաղանդի փայլատակումով, միանգամից ստեղծվում է կատարյալ, ամբողջական գեղարվեստական պատկերներ: Ընդ որում, որոշ երկերի նկատվող ժանրային անորոշությունը ձեւական հատկանիշ չէ, այլ գրողի ընթացքի տվյալ պահի բնորոշ գիծը:

Գեղարվեստական որոշ պատկերներ պատրաստի թատերական կառույց են, որոնք կարելի է բնագործել...

Այս արձակը ունի եւս մի բնորոշ հատկություն: Պարոնյանը կարիք չի զգում երկար, մանրամասն ծանոթությունների. սեղմ, խորիմաստ արտահայտություններով միանգամից բացահայտում է թեմայի խորքը: Նման վարմունքի պատճառն այն է, որ լինելով հանճարեղ անհասականություն, նա միանգամից շատ բան է տեսնում, եւ ժամանակ չունի երկար մնալու մեկ խնդրի շրջանակում:

Պարոնյանի գեղարվեստական պատկերները կառուցված են մի սկզբունքով, որի համաձայն իրքեւ զլխավոր դերակատար հանդես է գալիս ՊԱՏՄՈՂԸ՝ ուրույն մարդկային նկարագրով ու համոզմունքներով, եւ գրուցում է «Մեղվի» ընթերցողական լսարանի հետ: Ստեղծագործությունների ՆՅՈՒԹԸ ազգային իրականության հիմնահարցերն են, հիմնականում կենցաղային բախումների ձեւով դրսևորվող: Գեղարվեստական կառույցի մեջ երեք հիմնական դերակատարներից յուրաքանչյուրը ունի անփոխարինելի դեր: ՊԱՏՄՈՂԸ կրում է հեղինակի գաղափարները, կատարում նրա «հանձնարարությունը»՝ պրծարծում խնդիրներ, ներկայացնում պատկերներ, զնահատում, երգիծում: ԸՆԹԵՐՑՈՂԻ դերը երկակի է: Նախ, նա է «թելադրում» Պատմողի խոսքի ճաշակային եւ գաղափարական մակարդակը: Այս տեսակետից նրա դեր ոչ միայն հայեցողական չէ, այլեւ որոշակի չափով ներգործում է: Ընթերցողը Պատմողի հետ միասին ստեղծում է բարոյաևոգեբանական այն մթնոլորտը, որի մեջ հեղինակի գաղափարները հնչեղություն են ստանում: Երրորդ «դերակատարը» ժամանակի, ազգա-

⁶ Համաստեղի իրեն ընդված նամակները մեզ տրամադրել է Գրիգոր Շահինյանը:

⁷ Ե. Պոյաճյանի գեղուցման մեքենագիր տեքստը պահվում է Բեյրութում՝ Համազգայինի արխիվում:

¹ Ф. М. Достоевский "Дневники писателя" за 1876 г. полное собрание сочинений, том II, стр. 12, 1905, стр. 318.

² Մեքերներումները արված են երկերի ակադեմիական վերջին 10 հատար ժողովածուից: Շարադրանքում, փակագծի մեջ նշվում է հատորը եւ էջը: